Արինա Գրիգորյան
Հայաստանի պատմության թանգարան
arinagrigoryan.historymuseum@gmail.com

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ «ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ». ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԿՈՆՍԵՐՎԱՑՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ*

Հիմնաբառեր. Հայաստանի պատմության թանգարան, վերականգնման և կոնսերվացման լաբորատորիա, վերականգնում, կոնսերվացում, թանգարանային առարկաներ, նորարարական մեթոդներ, ժամանակակից սարքավորումներ:

Ներածություն

Հայաստանի պատմության թանգարանը հայկական մշակութային ժառանգության պահպանման և ուսումնասիրման կարևոր հաստատություններից է: Այս առումով թանգարանի վերականգնման և կոնսերվացման լաբորատորիան առանցքային դեր ունի, քանի որ զբաղվում է պատմամշակութային արժեքավոր առարկաների վերականգնմամբ և ամրակայմամբ՝ դրանց նոր կյանք տալով, հաճախ պարզապես փրկելով դրանք փոշիացումից և ոչնչացումից:

Այս հոդվածի նպատակը Հայաստանի պատմության թանգարանի վերականգնման և կոնսերվացման լաբորատորիայի (այժմ՝ Թանգարանային առարկաների վերականգնման և ամրակայման լաբորատորիա) ստեղծման պատմության, նրա գործունեության հիմնական ուղղությունների և մշակութային ժառանգության պահպանման գործում ունեցած կարևորության, ինչպես նաև լաբորատորիայի կողմից կիրառվող մեթոդների ներկայացումն է:

Լաբորատորիայի գործունեության պատմություն

Հայաստանի պատմության թանգարանի վերականգնման և կոնսերվացման լաբորատորիան սկսել է իր գործունեությունը որպես հնագիտության բաժնի մի մաս՝ 1930-ական թվականներին: Դրա գործունեության արդյունքները մեծապես պայմանավորված են եղել ժամանակի դեռևս ոչ այնքան բավարար մեթոդներով ու վերականգնման մեջ կիրառվող նյութերի սակավությամբ: 1945 թվականից հետո լաբորատորիան վերակազմավորվել է որպես առանձին բաժին՝ նպատակ ունենալով իրականացնելու ավելի համակարգված և գիտականորեն հիմնավորված վերականգնողական աշխատանքներ:

Ըստ տարիների լաբորատորիան իրականացրել է հետևյալ գործունեությունը.

* Ստացվել է 11.02.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

1. **1930–40-ականներ** – Լաբորատորիայի սկզբնական ժամանակահատվածում վերականգնման աշխատանքները հիմնականում սահմանափակվում էին առաջնային կարևորություն ունեցող նյութերի վերականգնմամբ՝ կիրառելով այդ տարիներին ընդունված վերականգնման մեթոդներ: 1946–1948 թվականներին Գուրգեն Արևշատյանի գլխավորությամբ լաբորատորիան ստեղծել է Գառնու հեթանոսական տաճարի մանրակերտը՝ օգտագործելով ժամանակակից տեխնիկա, որը հնարավորություն էր տալիս ճշգրիտ վերարտադրելու պատմամշակութային կոթողների մանրամասները:
2. **1950-ականներ** – Այս ժամանակահատվածում լաբորատորիան Վահրիճ Ղազազյանի ղեկավարությամբ սկսում է օգտագործել վերականգնման նոր մեթոդներ՝ հատկապես մետաղյա առարկաների վերականգնման համար: 1947 թվականին կիրառել է նոր քիմիական թթուներով մաքրելու մեթոդներ, որոնք արդյունավետ կերպով վերականգնեցին բրոնզե ու պղնձե գտածոները: 1950-ականներին լաբորատորիայի վերականգնողները պատրաստել են Հայկական լեռնաշխարհի մանրակերտը: 1950–1955 թթ. ստեղծել են Անիի 12 քմ մակերեսով մանրակերտը, որտեղ արտացոլված էին կանգուն, կիսավեր և պեղված հուշարձաններն այն վիճակում, երբ քաղաքը հանձնվեց թշնամուն: 1955–1959 թթ.՝ ճարտարապետության բաժնի հետ միասին պատրաստվեց Զվարթնոցի տաճարի մանրակերտը:
3. **1960-ականներ** – Հայաստանի պատմության թանգարանը երկրի մշակութային և հասարակական կյանքում ունեցել է անգնահատելի դերակատարում՝ դառնալով ոչ միայն պատմության պահպանման, այլև ազգային ինքնության ձևավորման կարևոր կենտրոն: Այս շրջանը նշանավորվեց նորարարական մեթոդների ներդրմամբ, որոնք հնարավորություն տվեցին վերականգնել ոչ միայն առարկաների նախնական տեսքը, այլև ապահովել դրանց երկարաժամկետ պահպանությունը:

Լաբորատորիայի նորարարական մոտեցումներից մեկն այն էր, որ այն չսահմանափակվեց միայն ավանդական վերականգնողական մեթոդներով, այլ ակտիվորեն ներմուծեց ժամանակակից քիմիական նյութեր և տեխնոլոգիաներ: Հատկապես զարգացրեց հատուկ քիմիական մաքրման մեթոդները, որոնք հնարավորություն տվեցին արդյունավետորեն վերականգնել նրբագեղ և փխրուն նմուշներ, ինչպես օրինակ՝ բրոնզե կաթսաներն ու գեղարվեստական նկարները: Այս նոր մեթոդները զգալիորեն բարձրացրին վերականգնման որակը և ապահովեցին արժեքավոր առարկաների երկարատև պահպանումը: Սա նոր փուլ էր թանգարանի վերականգնման պատմության մեջ, որը միավորեց ավանդական մեթոդները նորարարական տեխնոլոգիաների հետ:

Վերականգնման առաջնային նպատակն էր վնասված առարկաների նախնական տեսքի վերականգնումը՝ պահպանելով դրանց պատմական արժեքն ու ինքնությունը:

1. **Վերականգնում և վերանորոգում**. Նմուշների ֆիզիկական վնասվածքների վերացում, ճաքերի կամ այլ վնասվածությունների, կորոզիայի մաքրում և ամրապնդում:
2. **Պահպանում**. Պաշտպանություն բնական միջավայրի վնասակար ազդեցություններից (օդի խոնավություն, ջերմաստիճանի տատանում, լույսի ազդեցություն)՝ նմուշների հատուկ պահման պայմանների ստեղծմամբ:
3. **Հետազոտություն**. Մասնագիտացված սարքավորումների օգնությամբ նմուշների նյութի ուսումնասիրություն և վերլուծություն՝ վերականգնման մեթոդների ճշգրիտ որոշման համար:
4. **Մեթոդների մշակում**. Յուրաքանչյուր նմուշի համար առանձնահատուկ մոտեցման մշակում և վերականգնման պարբերական պլանավորում:

Վերականգնման ընթացքում քննարկվում էին տարբեր սկզբունքներ՝ առարկան ամբողջությամբ կամ մասնակի վերականգնման նպատակահարմարության վերաբերյալ, որին մասնակից էին դառնում նաև այլ մասնագետներ՝ հնագետներ, ազգագրագետներ, նկարիչներ, ճարտարապետներ: Այս քննարկումները նպաստեցին վերականգնման նոր մոտեցումների ձևավորմանը:

Լաբորատորիան կարևոր դեր է խաղում թանգարանի հավաքածուի պահպանման և վերականգնման գործում: Լաբորատորիան զբաղվում է թանգարանի հավաքածուի մաս կազմող հազվագյուտ և արժեքավոր նմուշների պահպանմամբ, ներառյալ հնագիտական գտածոներ, պատմական փաստաթղթեր, զարդեր, զենքեր, հագուստ և այլ մշակութային արժեքներ:

Լաբորատորիայի վերականգնող մասնագետներից շատերը մասնակցել են ամենահայտնի հուշարձանների պեղումներին՝ տեղում օգնելով հնագետին անվնաս հողից հանել հնագիտական նյութը, որով առարկայի փրկելը ավելի արդյունավետ է լինում, իսկ վերականգնումը՝ ավելի ստույգ և գիտական: Այդպիսի հուշարձաններից են Դվինը, Լճաշենը, Կարմիր Բլուրը, Օշականը, Այգևանը, Վերին Նավերը և այլն:

Համագործակցելով միջազգային մասնագետների և հաստատությունների հետ՝ լաբորատորիան ներդնում է նորարարական տեխնոլոգիաներ և գիտելիքներ, որոնք էապես բարձրացնում են վերականգնման աշխատանքների արդյունավետությունը: Օրինակ՝ 1959 թ. վերականգնող Վահրիճ Ղազազյանը Էրմիտաժի մի խումբ վերականգնողների հետ թանգարանի ցուցասրահում վերականգնել է Կարմիր բլուրից պեղված բրոնզե մեծ կաթսան, որի հատակը բացակայում էր (նկ. 1): Լճաշենից պեղված սայլերը 2000 թ. տեղափոխել են Հոլանդիա՝ վերականգնելու նպատակով: Այնտեղ սայլի մասերը իրարից անջատելով, հատ առ հատ մաքրվել է և հավաքվել մետաղական հիմքի վրա: Ամբողջացնելուց հետո նորից տեղափոխվել է թանգարան (նկ. 2):

Լաբորատորիայի հիմնական գործառույթները

Ներկայումս լաբորատորիայում վերականգնվում են տարբեր տեսակի հնագիտական գտածոներ՝ մետաղական իրեր, խեցեղեն, քարե կոթողներ, հնագիտա-

կան պեղումներով հայտնաբերված գործվածքներ և կաշվե առարկաներ, գորգեր, պատմական փաստաթղթեր, գրքեր, ձեռագրեր, քանդակներ, զարդեր և գեղարվեստական այլ աշխատանքներ:

Վերականգնման մեթոդներն ու փուլերը

Կախված նյութի տեսակից՝ թանգարանի լաբորատորիայում կիրառվում է վերականգնման մի քանի մեթոդ.

Ա. Հնագիտական առարկաների վերականգնում. այն նպատակ ունի պահպանել ու ուսումնասիրել նյութական մշակույթի արժեքավոր կտորները՝ ապահովելով դրանց երկարաժամկետ գոյատևումը, ամբողջականությունը և հետագա ուսումնասիրությունների համար մատչելիությունը:

Վերականգնման քայլեր

1. **Մաքրում**
   - **Մեխանիկական մաքրում՝** նուրբ գործիքներով (օրինակ՝ վրձիններ կամ խոզանակներ) հեռացնել առարկայի մակերևույթից փոշին, հողը կամ այլ նստվածքները:
   - **Քիմիական մաքրում՝** հատուկ լուծույթների միջոցով հեռացնել կեղտը կամ օրգանական մնացորդները:
   - **Ուլտրաձայնային մաքրում՝** կիրառվում է փխրուն և զգայուն առարկաների համար:
2. **Վերականգնում**
   - **Կառուցվածքային վերականգնում՝** կոտրված մասերը միացնելու համար օգտագործվում են հատուկ սոսինձներ կամ համակցող նյութեր:
   - **Վերականգնողական բաղադրամասեր՝** բացակայող հատվածները վերականգնվում են լրացուցիչ նյութերով (մետաղ, կերամիկա, ապակու նյութեր):
   - **Գունավորում՝** լրացված մասերն ու վերականգնված հատվածները գունավորվում են բնօրինակի հետ համահունչ՝ մեկ տոն բաց երանգով:
   - **Կազմության ամրացում՝** կոնսերվանտներ կիրառվում են առարկայի նյութի ամրապնդման և ապագա վնասներից պաշտպանության համար:
3. **Պահպանություն**
   - **Կլիմայական հսկողություն՝** առարկաները պահվում են հատուկ պայմաններում՝ խոնավության, լուսավորության և ջերմաստիճանի վերահսկողությամբ:
   - **Ապակու տակ ցուցադրում՝** հնագիտական արժեքավոր առարկաները ցուցադրվում են պաշտպանիչ ապակու տակ՝ օքսիդացումից կամ ֆիզիկական վնասներից խուսափելու համար:

4. Լուսանկարում

- Հնագիտական առարկաների մանրամասների վերլուծության և վերականգնման գործընթացը փաստաթղթավորվում է լուսանկարների միջոցով:

Վերականգնման մեթոդներ

1. **Մեխանիկական և քիմիական մաքրում**: Այս մեթոդները, թեև երկար ժամանակ օգտագործվել են, սակայն այսօր դրանք ավելի դյուրին և անվտանգ են դարձել՝ շնորհիվ նոր տեխնոլոգիաների և նյութերի օգտագործման: Քիմիական լուծույթները դարձել են ավելի նպատակամետ՝ ապահովելով առարկայի մակերևույթի խնամքով մաքրում, իսկ մեխանիկական մաքրումը ավելի թեթև ու չվնասող է դարձել՝ օգտագործելով ժամանակակից նուրբ գործիքներ:
2. **Ուլտրաձայնային մաքրում**: Մատչելի ու ճշգրիտ այս մեթոդը հատկապես օգտակար է այն առարկաների համար, որոնք փխրուն են և կարող են տուժել այլ մաքրման մեթոդների ժամանակ: Նրա կիրառումը հնարավորություն է տալիս առանց վնասելու բարձր ճշգրտությամբ մաքրել բարդ կառուցվածքով կամ փոքր չափերով առարկաները:
3. **Վերականգնողական բաղադրամասերի և սոսինձների կիրառումը**: Բոլոր վերականգնված մասերը նորից նույնականացվում են բնօրինակին հնարավորինս մոտ ձևով, որի համար օգտագործվում են ժամանակակից նյութեր՝ ամրացնող և կայունացնող հատկություններով: Այս մեթոդները մեծապես բարելավվել են, քանի որ նորարարական նյութերն ու տեխնոլոգիաներն ապահովում են ավելի ամուր, բնօրինակին մոտ վերականգնում:
4. **Կոնսերվանտներ**: Կոնսերվանտների կիրառումը, որոնք պաշտպանում են առարկաները ապագա վնասվածքներից, արդիական են հատկապես այն ժամանակներից հետո, երբ հնագիտական նյութերի հետազոտության և պահպանման ուղղությամբ ձեռք են բերվել նոր լուծումներ: Այսօր կիրառվող կոնսերվանտները ավելի արդյունավետ են և չեն վնասում առարկայի արտաքին տեսքը, իսկ դրանց ազդեցությունը երկարատև է:
5. **Պահպանման պայմանների մոնիտորինգ**: Կլիմայական հսկողությունն այսօր հնարավոր է իրականացնել բարձր ճշգրտությամբ՝ հատուկ տեխնիկական սարքավորումների միջոցով: Այս մեթոդը ապահովում է գտնված առարկաների անվտանգ պահպանում՝ նրանց հակազդելու վտանգավոր պայմաններից (ջուր, բարձր խոնավություն, վատ լուսավորություն կամ բարձր ջերմաստիճան):

Այս մեթոդների համատեղ օգտագործումը հնարավորություն է տալիս պահպանել գտածոները մեծ արդյունավետությամբ՝ ապահովելով դրանց երկարաժամկետ կյանքը և հետագա սերունդներին մատչելիությունը: Սրանք հնարավորություն են տալիս վերականգնել պատմական ու մշակութային արժեքներ՝ նորարարական լուծումների շնորհիվ, որոնք դարձնում են գործընթացները ոչ միայն ավելի արագ, այլև ավելի վստահելի:

Ապակե առարկաների վերականգնում

Հնագիտական ապակյա առարկաների վերականգնումը զգույշ և գիտական մոտեցում է պահանջում՝ դրանք հնարավորինս լավ պահպանելու համար: Վերականգնման գործընթացը սովորաբար ներառում է հետևյալ փուլերը: Ուսումնասիրվում են առարկայի նյութը, կառուցվածքը և վնասվածքի աստիճանը: Որոշվում են ապակու բաղադրիչները՝ վերականգնման ճիշտ նյութեր ընտրելու համար: Այնուհետև կատարվում են մեխանիկական մաքրում օգտագործելով բարակ վրձիններ և միկրոմաքրող գործիքներ՝ կեղտը հեռացնելու համար: Պետք եղած դեպքում կիրառվում են հատուկ լուծույթներ, որոնք հեռացնում են նստվածքները՝ առանց ապակին վնասելու: Ձարդված հատվածները կպցնելու համար օգտագործվում են թափանցիկ, հնագիտական առարկայի պահպանման համար անվտանգ սոսինձներ (օրինակ՝ Paraloid B-72): Պակասող հատվածները լցվում են Paraloid B-72 նյութից պատրաստված թիթեղով, որոնք չեն ազդում բնօրինակի վրա: Առարկայի պահպանումը կատարվում է կայուն ջերմաստիճանի (18–22°C) և խոնավության (40–50%) պայմաններում: Այս մեթոդները հնարավորություն են տալիս հնագիտական ապակյա առարկաները երկարաժամկետ պահպանելու և ցուցադրելու համար՝ չվնասելով դրանց պատմական արժեքը: Ապակու վերականգնման մեջ կիրառվող ժամանակակից նյութերի շնորհիվ հնարավոր դարձավ ոչ միայն սոսնձել ապակե անոթների մասերը, այլև անոթին ամբողջական տեսք տալ՝ լրացնելով պակասող մասերը հատուկ նյութով: Դրա շնորհիվ ապակե անոթը ավելի ներկայանալի է դառնում ցուցադրության համար: Այս նոր եղանակը կիրառվեց 2024թ. Դվինի միջնադարյան մի շարք ապակե անոթների վերականգնման մեջ, մասնավորապես 12–13-րդ դդ. ապակե ափսեի դեպքում, որը դրանից հետո ցուցադրվել է Վենետիկում՝ Մարկո Պոլոյին նվիրված ցուցահանդեսում:

Հնագիտական խեցեղենի վերականգնում

Առարկայի վրա առաջացած աղտոտվածությունը հեռացվում է տաք ջրով՝ խոզանակների օգնությամբ, ապա անհրաժեշտության դեպքում առարկան մաքրվում է քիմիական լուծույթներով: Քիմիական լուծույթները, կախված առարկայի վրա գոյացած նստվածքի տեսակից, լինում են տարբեր: Կրային նստվածքի հեռացման ամենաէֆեկտիվ տարբերակներից մեկը մրջնաթթուն է (Ch2O2), որը սուր հոտով անգույն հեղուկ է: Կախված նստվածքի հաստությունից և կարծրությունից, ինչպես նաև առարկայի որակից՝ կարելի է կիրառել մրջնաթթվի 5–20%-անոց կամ քացախաթթվի 3–5%-անոց լուծույթ (ջրային հիմքով): Ժանգի հետքերը կարելի է հեռացնել 10%-անոց կիտրոնաթթվի կամ 5%-անոց տրիլոն Բ-ի ջրային լուծույթով: Ջրածնի պերօքսիդի 10%-անոց ջրային լուծույթը հեռացնում է թանաքի հետքերը, իսկ էթիլ սպիրտն ու ացետոնը հանդիսանում են մաքրող միջոցներ յուղերի, խեժերի և սուրգուչի համար (Андреева и др. 1999, 32): Խեցեղենի մեխանիկական մաքրում խորհուրդ չի տրվում: Սակայն անհրաժեշտության դեպքում կարելի է օգտագործել բոր մեքենայի ռետինե փափուկ գլխիկներ կամ նշտար: Մաքրման աշխատանքներից հետո անհրաժեշտության դեպքում առարկան լվանում են, ապա չորացնում բնական պայմաններում՝ խուսափելով արևի անմիջական ճառագայթնե-

րից: Առարկայի լիարժեք չորացումից հետո կատարվում է բեկորների ամբողջացում սոսնձի միջոցով: Բեկորների սոսնձումից հետո չորացման գործընթացը ընթանում է բնական պայմաններում: Առարկայի բեկորների սոսնձումից հետո բացակա հատվածները լրացնում են գիպսի միջոցով և մշակում: Գիպսի հարթեցումը կատարվում է մետաղական չժանգոտվող ցանցերի կամ հղկաթղթի միջոցով: Ամբողջականացումից հետո կատարվում է գիպսի գունավորում: Ավարտական փուլում կատարվում է առարկայի վերջնական ամրակայում Պարալոիդ Բ-72 կոչվող խեժի 2,5%-անոց լուծույթով (լուծիչ նյութը՝ ացետոն): Վերջինիս կիրառման արդյունքում առաջացած շերտը (թափանցիկ, քիչ փայլուն) թույլ է տալիս առարկան պաշտպանել արտաքին միջավայրի ազդեցություններից, կանխել փոշու կլանումը:

Այս փուլերի միջոցով հնարավոր է վերականգնել հնագիտական խեցեղենի սկզբնական տեսքը՝ ապահովելով դրա հետագա ուսումնասիրությունն ու ցուցադրությունը: Վերականգնման լաբորատորիայի մասնագետները ցուցաբերում են ժամանակակից մոտեցումներ թանգարանային առարկաների վերականգնման գործընթացում:

Օրինակ՝ Հառիճից պեղված անոթը, որը եղել է բեկորային վիճակում, բավականին բարդ աշխատանք կատարելուց հետո ամբողջացվել է (նկ. 3–4):

Փայտե առարկաների վերականգնում

Վերականգնողը, որը մասնագիտացած է փայտե առարկաների գործում, վերականգնում է տարբեր դարաշրջանների և ոճերի կահույք, հնագիտական փայտե առարկաներ: Վերականգնելուց առաջ մասնագետը կատարում է առարկայի բազմակողմանի ուսումնասիրություն (զննում, նկարագրություն), պատմաարխիվային հետազոտություններ, որոնց ընթացքում պարզում է նախնական տեսքը, իրականացնում է քիմիական, ֆիզիկական, կենսաբանական հետազոտություններ, որոշում է վնասվածքների պատճառներն ու բնույթը, մշակում է վերականգնման մեթոդաբանությունը, ընտրում անհրաժեշտ նյութերը և վավերագրում վերականգնման գործընթացը (օրագրեր, լուսանկարներ, տեսագրություններ):

Վերականգնողը մաքրում է աղտոտվածությունը և նախորդ վերականգնման աշխատանքների մնացորդները, իրականացնում է ախտահանում և վնասատուների դեմ պայքար, մաքրում մակերեսները բորբոսից, մամուռներից, սնկերից և ջրիմուռներից, վերակառուցում է առարկան ըստ անալոգների, նկարների կամ լուսանկարների, հավաքում և սոսնձում է կոտրված մասերը, ամրապնդում այրված հատվածները, վերականգնում ներկերն ու ոսկեզօծումները, կիրառում պաշտպանիչ շերտեր:

Թանգարանային վերականգնման նպատակը ոչ թե վերաստեղծելն է, այլ պահպանելը արվեստի կամ պատմական արժեք ունեցող առարկայի առանձնահատկությունները և այն ժամանակաշրջանի ոգին, երբ այն ստեղծվել և գոյություն է ունեցել:

Մետաղական առարկաների վերականգնում

Ըստ հնագիտական մետաղի պահպանվածության աստիճանի՝ կիրառվում են քիմիական մաքրման տարբեր տեսակներ: Օրինակ՝ մետաղական առարկան իջեցնում են կալիումի (KOH) կամ նատրիումի (NaOH) հիդրոքսիդի 10%-անոց ջրային լուծույթի մեջ, ապա տաքացնում մինչև 70°C-ի, այնուհետև առարկան լվանում թորած ջրով: Այս գործողություններից հետո առարկան իջեցնում են տրիլոն Բ-ի (C10H14N2Na2O8) 10%-անոց ջրային լուծույթի մեջ, որը սկզբում դառնում է երկնագույն, ապա՝ կապույտ: Այնուհետև առարկան լվանում են թորած ջրով, որից հետո կրկնում են տրիլոն Բ-ի լուծույթով մաքրումն այնքան, մինչև հեղուկը դադարի կապտել: Մեխանիկական մեթոդի դեպքում առարկաները որևէ կերպ չեն ենթարկվում քիմիական, էլեկտրական մշակման: Այս պարագայում առարկաների վրա առաջացած գոյացությունները (կոռոզիա, հողի կարծր շերտ, կրային նստվածքներ) հեռացվում են ձեռքի գործիքների և բոր մեքենայի միջոցով: Ձեռքի գործիքներ են հանդիսանում ակնաբուժական, ստոմատոլոգիական և վիրաբուժական տարատեսակ գործիքներ: Բոր մեքենայի փափուկ մետաղական և չոր ռետինե գլխիկները մեխանիկական մաքրման հիմնական գործիքներից են: Մեխանիկական մեթոդը, ի տարբերություն մնացածների, առավել անվտանգ է առարկաների նախնական տեսքը պահպանելու առումով: Մասնավորապես, քիմիական մեթոդների դեպքում, եթե կոռոզիան հեռացնելիս առարկան կարող է ստանալ մետաղի կտորի տձև տեսք, ապա մեխանիկական մեթոդի դեպքում առարկայի վրա կարող են մնալ կոռոզիայի հետքեր, բայց այն կպահպանի իր նախնական կամ դրան մոտ տեսքը: Այս դեպքում կարևոր է առարկայի ախտահանման, չորացման և ամրակայման գործընթացը, ինչը թերի կատարելու դեպքում չի կանգնեցի կոռոզիոն գործընթացները, որոնք էլ կշարունակեն քայքայել մետաղը:

Օրինակ՝ բրոնզե մարտակառքի մոդելը, որը գտնվում էր բավականին վնասված վիճակում: Թաղման ժամանակ դամբարանը փակելուց հետո, ծիսական արարողության ժամանակ վառել են: Դամբարանում գտնվող բոլոր մետաղական առարկաների բավականին վնասված լինելու պատճառը դա է (նկ. 5–6)

Շատ կարևոր է նաև Արտաշատից պեղված մարմարե ունգվենտարիումը, որը երկար տարիներ շարունակ բեկորային վիճակում, տարբեր միավորներ ունեցող տուփերով պահվել է ֆոնդում և այդպես հրատարակվել է երկար տարիներ: 2022թ. այդ բոլոր տուփերը բերվել են լաբորատորիա և ամբողջացվել է երկու ունգվենտարիում (նկ. 7):

Գործվածքի վերականգնում

Թանգարանի գործվածքի վերականգման լաբորատորիան գործում է 1960-ական թթ.: Գործվածքների վերականգնման լաբորատորիայում՝ շնորհիվ հմուտ մասնագետ-ռեստավրատորների ոչնչացումից փրկվել են տեքստիլի հարյուրավոր բարձրաժեք նմուշներ ինչպես Հայաստանի պատմության թանգարանի, այնպես էլ հանրապետության այլ թանգարանների հավաքածուներից. հնագիտական գործվածք, եկեղեցական վարագույրներ և ծածկոցներ, ավանդական տարազի և եկեղեցական հանդերձանքի մասեր, անվանի մարդկանց անձնական իրեր, ոսկե-

թել-մետաքսաթել ասեղնագործության բացառիկ նմուշներ և այլն: Բացառիկ վերականգնման օրինակ է Կոնքեռը (18-րդ դ., Թիֆլիս), մետաղաթել գործվածքով (նկ. 8–9) :

Գորգի վերականգնում

Գորգի վերականգնման այժմ միակ լաբորատորիան գործում է Հայաստանի պատմության թանգարանում: Գորգի հավաքածուն ընդգրկում է ավելի քան վեց հարյուր օրինակներ, որոնցից շատերը եզակի են ՀՀ թանգարանային ֆոնդում: Համաձայն արխիվային փաստաթղթերի՝ գորգերի վերականգնման աշխատանքները ՀՊԹ-ում սկսվել են 1980-ական թվականների սկզբից: Թանգարանում վերականգնվում է գորգի հիմքը, միջնաթելը, խավը, եթե անհրաժեշտ է՝ մասամբ է ավելացվում, անցքերն են հիմնականում վերականգնվում, որն ամենամեծ խնդիրն է, որովհետև անցքերից է շարունակվում քայքայման պրոցեսը (նկ. 10):

Լաբորատորիայի մասնագետները պարբերաբար մասնակցում են միջազգային փորձի փոխանակումների ու գիտական խորհրդակցությունների՝ Տոկիոյի մշակութային արժեքների ազգային հետազոտական ինստիտուտի, Ֆրանսիայի ժառանգության ազգային ինստիտուտի և այլ մասնագետների հետ, ձեռք բերելով ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման նոր հմտություններ: Այս համագործակցությունները նպաստում են լաբորատորիայի մասնագետների մասնագիտական աճին և նորարարական մեթոդների շարունակական զարգացմանը:

Եզրակացություն

Հայաստանի պատմության թանգարանի վերականգնման և կոնսերվացիայի լաբորատորիայի գործունեությունը ցույց է տալիս, թե ինչպես են զարգացել հնագիտական գտածոների պահպանման ու վերականգնման գործընթացները վերջին տասնամյակներում: Լաբորատորիան ունի կարևոր դեր մշակութային ժառանգության պահպանման գործում՝ միաժամանակ օգտագործելով ժամանակակից մեթոդներ, որոնք ներառում են մաքրում, վերականգնում և ամրացում: Այս աշխատանքները կատարվում են խիստ գիտական ու տեխնիկական մոտեցումներով, որոնք ապահովում են գտածոների ֆիզիկական ու պատմական արժեքի պահպանությունը:

Վերականգնման գործընթացներում կիրառվող մեթոդները՝ սկսած քիմիական մաքրումից մինչև սոսինձների և կոնսերվանտների կիրառումը, ցույց են տալիս, թե ինչպես կարող են համակցվել ավանդական և նորարարական տեխնոլոգիաները՝ ապահովելով ավելի կայուն ու արդյունավետ պահպանություն: Այս համատեքստում, բարելավված տեխնիկայով և մեթոդներով իրականացվող վերականգնման աշխատանքները ցույց են տալիս, որ դրանց կիրառումը ոչ միայն օգուտ է տալիս առարկաների պահպանմանը, այլև նպաստում է դրանց հետագա հետազոտությանը և ուսումնասիրությանը:

Մի կողմից, այս հոդվածը ներկայացնում է տեսական և գործնական մի շարք մեթոդներ՝ վերականգնման գործընթացների գնահատման համար, որոնք կարող են օգնել մշակութային ժառանգության պահպանման ռազմավարությունների

որոշմանը: Մյուս կողմից, այն նպաստում է գիտության և վերականգնման մեթոդների փոխանակմանը՝ միավորելով միջազգային փորձը և դրանից ստացված գիտելիքները: Արդյունքում, այս հոդվածը պոտենցիալ ուղիներ է առաջարկում հետագա ուսումնասիրությունների համար, ընդլայնելով պատմական և մշակութային ժառանգության պահպանման շրջանակը՝ նոր չափանիշներով և մոտեցումներով:

Լաբորատորիայի գործունեությունը վկայում է, որ մշակութային ժառանգության պահպանությունը պահանջում է հետևողականություն, մասնագիտական բարձր հմտություններ և նվիրվածություն: Այն շարունակում է իր կարևոր առաքելությունը՝ ամրապնդելով Հայաստանի տեղը համաշխարհային մշակութային քարտեզի վրա և հպարտության զգացում առաջացնելով յուրաքանչյուր հայի մեջ:

Աղյուսակ 1

1945 թ.-ից մինչև այսօր լաբորատորիայի աշխատակիցների ցուցակ

Թագուհի Քալանթարյան	1930–ական թթ.
Արևշատյան Գուրգեն Հովհաննեսի	1945–1963 թթ.
Ղազազյան Վահրիճ Եղիայի	1945–1985 թթ.
Հայրապետյան Հայկ Եղիայի	1957–1959 թթ.
Հովհաննիսյան Ռդիսևս Գուրգենի	1959–1989 թթ.
Հունանյան Ազնիվ Արշակի	1961–1989 թթ.
Նահապետյան Ռուբեն Գրիգորիի	1963–1972 թթ.
Դայան Սերգեյ	1972–1972 թթ.
Եսայան Այրիս Երվանդի	1974–2021 թթ.
Գրիգորյան Ֆլորա	1977–1989 թթ.
Գևորգյան Աշոտ Մուկուչի	1977–1989թթ.
Մանուկյան Արամայիս Հրաչի	1977–1978 թթ.
Սարվազյան Լևոն Սամսոնի	1978–1991 թթ.
Խոշորյան Վարդուհի Հակոբի	1979–1989 թթ.
Ախայան Լևոն Ռուբենի	1981–1984 թթ.
Սարգսյան Աշոտ Շավարշի	1984–1985 թթ.
Մելքոնյան Աշոտ Էդիկի	1986–1987 թթ.
Ղազինյան Արամ Աբելի	1986–1986 թթ.
Հակոբյան Գևորգ Ռաֆիկի	1986–1986 թթ.
Ղազարյան Վարդուհի Ղազարի	1986–1989 թթ.
Գևորգյան Արմեն Էդիկի	1987–1988 թթ.
Սահակյան Հրաչիկ Վարդգեսի	1987–1990 թթ.
Հարությունյան Մարո Սուրենի	1987–մինչ օրս
Հովհաննիսյան Անուշ Վաղիկի	1989–2004 թթ.
Կնյազյան Արմեն Վաղարշակի	1990–1990 թթ.
Գևորգյան Գևորգ Աշոտի	1991–1992 թթ.
Խաչատրյան Գարեգին Խաչատուրի	1991–1997 թթ.
Գալարյան Ելենա Նիկոլայի	1991–1998 թթ.

Աթոյանց Ելենա Լևոնի	1992–2012 թթ.
Մկրտչյան Վերոնիկա Սարգսի	1992–2012 թթ.
Արզումանյան Գարեգին	1994–1997 թթ.
Գրիգորյան Մաղլենա	2003–2008 թթ.
Խաչատրյան Հասմիկ Մարտիկի	2003–2021 թթ.
Հակոբյան Հայկանուշ Եղիկի	2004–2005 թթ.
Բիրինյան Աստղիկ Հրաչյայի	2006–2006 թթ.
Մայիլյան Թամարա Ալբերտի	2004–2004 թթ.
Շչերբակովա Աննա Բորիսի	2010–2023 թթ.
Ղազարյան Արմեն Ռազմիկի	2012–2014 թթ.
Մելքոնյան Աստղիկ Գոռի	2012–2021 թթ.
Ղալաչյան Մանվել Մարտիրոսի	2014–2018 թթ.
Աբգարյան Թերեզա Օնիկի	2018–2020 թթ.
Պապոյան Մարիամ Արամի	2021– մինչ օրս
Վարդանյան Գևորգ Ջորիկի	2020– մինչ օրս
Մամիկոնյան Լիլի Աշոտի	2021–2024 թթ.
Գրիգորյան Արինա Վիտալիի	2022– մինչ օրս
Ավագյան Ինեսա Վահանի	2022–մինչ օրս
Բիչկով Տիմոֆեյ Սերգեյի	2023–մինչ օրս
Հարությունյան Տաթևիկ Անուշավանի	2023–մինչ օրս

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

ՀՊԹ արխիվ, Հաշվետվություններ 1930–2024:

ՀՊԹ արխիվ, Հրամանագրքեր 1930–2024:

Գրականություն

ԱՄԻՐՅԱՆ 2023 – Ամիրյան Ս., *Թանգարանագիտություն*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2023:

ԺԱՄՀԱՐՅԱՆ 2008 – Ժամհարյան Դ., *Վերականգնման և կոնսերվացիայի նորարարական մեթոդներ, Պալիմական ժառանգության պահպանում*, Երևան, Հայկական Հասարակություն, 2008:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 2010 – Կիրակոսյան Գ., *Հայկական մշակութային ժառանգության պահպանություն ու վերականգնում*, Երևան, Հայկական Արխիվներ և Հնագիտական Պահպանման Կենտրոն, 2010:

ՄԿՐՏՉՅԱՆ 2015 – Մկրտչյան Ռ., *Հնագիտական գտածոների վերականգնում և պահպանություն*, Երևան, Պատմության ինստիտուտ, 2015:

АНДРЕЕВА, АНТОНЯН, БАРАБАНОВА и др. 1999 – Андреева Л., Антонян А., Барабанова Т. и др., *Реставрация музейной керамики: Методические рекомендации*, Москва, издательство Всероссийский художественный научно-реставрационный центр имени Грабаря, 1999.

СТЕПАНОВА 2018 – Степанова Ю., *Основы реставрации*, Тверь, издательство Тверской госуниверситета, 2018.

KOLLER 2003 – Koller D., *Conservation and Restoration of Archaeological Objects*, New York, 2003.

LERMAN 2012 – Lerman D., Restoration and Conservation of Ancient Artifacts: Methods and Materials, *Archaeology and Conservation Journal*, 2012, 56(2), 201–210.

JABLONSKI, MAYER 2010 – Jablonski T., Meyer J., Scientific Methods in Art Conservation, *Journal of Cultural Heritage*, 2010, 11(1), 123–134.

ZAMPINO, RIZZO 2017 – Zampino E., Rizzo S., Innovative Technologies in the Preservation and Restoration of Cultural Heritage, *Cultural Heritage and Preservation Technologies*, 2017, 9(3), 85–92.

SAPIĆ, TOMAS 2016 – Sapić S., Tomas M., Modern Approaches in Archaeological Conservation and Restoration, *International Journal of Conservation and Restoration*, 2016, 24(4), 203–214.

ICOMOS Guidelines for the Conservation of Cultural Heritage, International Council on Monuments and Sites, Paris, 2018.

GRIČIAN, HOVHANNISYAN 2021 – Gričian I., Hovhannisyan R., Archaeological Artifacts and Conservation Techniques in Armenia, *Armenian Archaeological Journal*, 2021, 34(1), 78–89.

Arina Grigoryan

History Museum of Armenia

arinagrigoryan.historymuseum@gmail.com

"RECONSERVATION DEPARTMENT" OF MUSEUM VALUES: RESTORATION AND CONSERVATION LABORATORY OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

Keywords: History Museum of Armenia, restoration and conservation laboratory, restoration, conservation, museum objects, innovative methods, modern equipment

The History Museum of Armenia is one of the important institutions for the preservation and study of Armenian cultural heritage. In this regard, the museum's restoration and conservation laboratory plays a key role, as it is engaged in the restoration and strengthening of historically and culturally valuable objects, giving them a new life, often simply saving them from disintegration and destruction.

The laboratory's activities began in 1945, the goal of which was, first of all, to restore the museum's specimens, not only to save them, but also to make them more presentable and understandable for the visitor.

The purpose of this program is to present the history of the creation of the Restoration and Conservation Laboratory (now the Restoration Laboratory) of the History Museum of Armenia, the main directions of its activities and its importance in the preservation of cultural heritage, as well as the methods used by the laboratory.

Арина Григорян

Музей истории Армении

arinagrigoryan.historymuseum@gmail.com

ОТДЕЛ «РЕНОВАЦИИ» МУЗЕЙНЫХ ЦЕННОСТЕЙ. РЕСТАВРАЦИОННО-КОНСЕРВАЦИОННАЯ ЛАБОРАТОРИЯ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

Ключевые слова: Музей истории Армении, реставрация и консервационная лаборатория, реставрация, консервация, музейные предметы, инновационные методы, современное оборудование.

Музей истории Армении является одним из важнейших учреждений по сохранению и изучению армянского культурного наследия. В этом плане ключевую роль играет реставрационно-консервационная лаборатория музея, которая занимается реставрацией и сохранением объектов, представляющих историческую и культурную ценность, давая им новую жизнь, а зачастую просто спасая их от распада и уничтожения.

Деятельность лаборатории началась в 1945 году, основной целью которой была реставрация музейных экспонатов, причем не только для их сохранения, но и для придания им большей наглядности и понятности для посетителей.

Целью данной программы является представление истории создания Лаборатории реставрации и консервации (ныне Лаборатория реставрации) Музея истории Армении, основных направлений ее деятельности и ее значения в деле сохранения культурного наследия, а также методов, используемых в лаборатории.